

ԱԿ-1/[108841]-  
14



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«12 հ.պ.հ. 2014»

N 102-26/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N17-Ա/1  
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետով.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի փետրվարի 4-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից ծեր և հաշմանդամ քաղաքացիներին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ ուղեգրման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն տեղեկատվություն ներկայացնելու կարգը հաստատելու մասին» N17-Ա/1 հրամանով (այսուհետ՝ հրաման) հաստատված հավելվածի 6-րդ կետի 2)-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «2) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները (տուն-ինտերնատներ) ուղեգրված յուրաքանչյուր քաղաքացու մասին (ազգանուն, անուն, հայրանուն, ուղեգրի համարը, ամսաթիվը և ուղեգիրը տված կենտրոնի անվանումը) 3-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնում են նախարարություն, պատճենը՝ համապատասխան կենտրոն, իսկ ամիսը մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 10-ը, նախարարություն են ներկայացնում հաշվետվություն՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շարժի վերաբերյալ (կից՝ Ձև N2):



**Ա.ԱՍԱՏՐՅԱՆ**

Տուն-ինտերնատի անվանումը

(տարեթիվը և ամիսը)

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության (տուն-ինտերնատ) հաճախորդների շարժի վերաբերյալ

Հ/հ		Հաշվեքվու ժամանակաշրջանում			Հաշվեքվու ժամանակաշրջանի վերջում	
		ընդունվել են	դուրս են գրվել	մահացել են	ընդամենը	այդ թվում կանայք
1.	Հաճախորդների թվաքանակը					
1.1	այդ թվում՝ անկողնային					
2.	հաճախորդներից հաշմանդամներ, ընդամենը					
2.1	այդ թվում 1-ին խումբ					
2.2	2-րդ խումբ					
2.3	3-րդ խումբ					
3.	Հաճախորդներն ըստ փարիքի					
3.1	մինչև 65 փարեկան					
3.2	65-90 փարեկան					
3.3	90-ից բարձր					
4.	Նախքան սպասարկվելը միայնակ բնակվողների թվաքանակը					
5.	Ժառանգ չունեցողների թվաքանակը					
6.	Անշարժ գույք ունեցողների թվաքանակը					
7.	Ամուսնական զույգերի թվաքանակը					

ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏԻ ՏՆՕՐԵՆ

( ստորագրություն, ազգանուն, անուն)

Կ.Տ. (ամիս, ամսաթիվ)